



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«27» հուլիսի, 2022 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N° 16-Ա/Ք

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 06-Ա/Ք
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, հաշվի առնելով ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 25-ի N 03-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2022 թ. հուլիսի 20-ի առաջարկությունը և ելնելով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների չափից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2022 թվականի ապրիլի 11-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվելիք գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկերը հաստատելու մասին» N 06-Ա/Ք հրամանի հավելվածներում կատարել հետևյալ լրացումները.

- 1) հավելված N 1-ում գիտական միջոցառումների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

7	Համահայկական գիտաժողով 2022	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
8	Միկրոալիքային և տերահերցային տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցական կապ և օպտոէլեկտրոնիկա	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
9	Կովկասը միջազգային առևտրի և մշակութային փոխառնչությունների խաչմերուկներում (հնագույն ժամանակներից մինչև նոր շրջան)	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ
10	«Լազերային ֆիզիկա-2022» միջազգային գիտաժողով	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
11	«Լեռնցի ժողովուրդների ավանդական գեղարվեստական մշակույթի պրոբլեմները. պատմատիպաբանական կապերն ու զուգահեռները Եվրասիայի ժողովուրդների ավանդական և ակադեմիական արվեստում» միջազգային գիտական կոնֆերանս	ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ

2) հավելված N 2-ում երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

3	Հայ-գերմանական համատեղ գործնական դասընթաց	«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
4	«Գիտության արդի մոտեցումները. գիտաչափություն» 3-րդ միջազգային ամառային դպրոց	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
5	Գ.Տեփանոսյանի հիշատակին նվիրված 1-ին երիտասարդական ամառային դպրոց «Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) և հեռազննման տեխնոլոգիաների կիրառման ոլորտները և հնարավորությունները»	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(պարտականությունները կատարող)